

բեռնաւորել, այլ Տիւրքն ու զօրութիւնը կեն-
գործացնելով՝ լի ողջութեամբ եւ գեղեցիկ պտուղ-
ներ յառաջ բերելու է: Անոր Տամար

ա. Տիւրքնոր շատաւորներն Յունիսի մէջերն
կամ գէթ մինչեւ. Յունիսի վերջերը ծայրատեղի
է: Այս շատաւորներէն տկարագոյններուն 4—5
աչք, իսկ զօրաւորներուն 6—8 աչք ձգելու է:

բ. Պտղատու բարունակի վրայ բուսող
ծաղկալից շատաւորները ծայրատեղի է թողլով
միայն 1—2 աչք: Ասիկայ պէտք է ըլլալ ամենէն
ուշ՝ ծաղկելէն 8—10 օր յառաջ, ուստի Յու-
նիսի մէջերն, եթէ աներ կանուխ կարելի չըլլայ.
որպէս զի այս կանուխ ծայրատեղի շատաւորնե-
րու աւելորդ, մանաւանդ թէ փասակար աճումն
արգելուի եւ որովհետեւ զօրութիւնը կենդանո-
ւանայ եւ ողջութեամբ աճման գործածուի: Եթէ
այս ծայրատեղի շատաւորներու վրայ յապա-
գայիննոր ծիւրեր սկսին երեւալ, առանց ինչպե՛րու
փրցնելու Տանելու է:

գ. Զօրաւոր նոր շատաւորներն, որ Տե-
տեւեալ տարին պտղատու բարունակներ պիտի
ըլլան, պէտք է նշնպէս Յունիսի մէջերը կամ
վերջերն, եւ ամենէն ուշ Օգոստոսի սկիզբն ծայ-
րատել, զօրութեան աստիճանին Տամարստ՝ թող
տալով 12, 15, 18—20 աչք (3 $\frac{1}{2}$, 4—5 ոտք
երկայն):

դ. Հետեւեալ տարին պտղատու բարու-
նակ ըլլալու սահմանեալ շատաւորներու կող-
մնական ընձեւորներէն տկարները պէտք չէ ծայ-
րատել, բայց եթէ զօրանալէն ետեւ. իսկ զօրաւ-
որները ծայրատեղի է 1—2 աչք թողլով: Այս
ընձեւորները բոլորովին կարելի չ'ստիճի չ'ըլլար,
սպա թէ ոչ՝ Տետեւեալ տարւոյ պտղատու աչք
չի մնար: Եւ ոչ ալ ձեռք փրցնելու է, վասն
զի շատ անգամ միւս աչքերը կը փնտսին: Մին-
չեւ Սկստմանը ուր որ կարեւոր կ'երեւայ այս-
պիսի ծայրատեղի մը՝ պէտք չէ զանց առնել:

ե. Եթէ որթատունկն հովանոյ կամ զար-
դի Տամար չէ, այլ իրեն պղի կը մշակուի, Ժա-
մանակին կը ծայրատուի տկարներու վրայ 4, 5—6
աչք, իսկ զօրաւորներու վրայ 8, 9—10 աչք
թողլով. վասն զի ասոնք գարնան արդէն գրեթէ
մինչեւ բուն կը յառուին:

զ. Հարկաւոր է Տետեւեալ տարւոյ սահ-
մանեալ երկայն բարունակներն մէկ կամ երկու
անգամ կտրել՝ որ զօրաւոր անձրեւէ եւ հովե-
լէտարին:

հաւեւ որթատնկոյ արմատէն բուսած շա-
տաւորներն, որոնք առ հասարակ նպատակար կը
նկատուին, եթէ վերոյիշեալ եղանակաւ հոգա-

ցուին, պտղատու բարունակներ կ'ըլլան: Յամին
1879/80 ձմեռն իմ որթատնկերս մինչեւ ար-
մատը ստուցանէ: 1880 արմատէն բուսած շա-
տաւորներէն չորս զօրաւորները պահեցի, միւսները
քնեցի: 1882ին ամէն մէկ տունը գրեթէ 130
գեղեցիկ ողջոյլ տուաւ:

W. Vorster.



ՄԱՐԿԱԿԱՆ ՄԱՐԿԱԿԱՆ

Ռուսական-Պարսկական առեւտրական գործա-
կցութեան Գործադիր Կոմիտէ St. Petersburgs-
kija Wjedomosti կը ծանուցանէ՝ Պարսկաստանի
ռուսական նոր դեսպանն, գաղտնի խորհրդական
Պիլցով, պատուէր ընդունած է թեհերան Տա-
նկուն պէս՝ Պարսկական պետութեան Տետ առ-
եւտրական նոր դաշնացի վրայ բանակելի: Ռու-
սիոյ եւ Պարսկաստանի առեւտրական յարաբե-
րութեանց հիմնական կանոնները 1828ի դա-
շնացի վրայ իրբեւ ամբողջացուցիւ աւելցուած
էին, որով Ռուսիոյ ամբական սահմաններու մա-
քսերու չափն սահմանուած էր: Այս երկու հնա-
ցեալ դաշնացի նորագոյնեան ինդիքն արդէն
1883ին վերստին յուղուած էր անդրկականեան
վաճառանցման ինդիքներն որոշելու առթիւ,
սակայն մինչեւ ցայսօր որոշում մը չէր եղած:

Վաճառականութեան համաձայնութիւն է Սեւաստո-
փոլ: Ինչպէս Բեղերսկանովի կը ծանուցուի՝ Սեւ-
աստոքովի կամ Թեհերանի մէջ վաճառականա-
կան նաւահանգիստ մը շինելու ինդիքն ի նպաստ
առաջնայն որոշուցեալ: Սեւաստոքովի պատերազ-
մական նաւահանգիստը պիտի մնայ դարձեալ իւր
տեղը, իսկ վաճառականական նաւահանգիստը
քաղաքէն քիչ մը Տետու Սգրեյեցքի ծոցին մէջ
պիտի շինուի: Սակայն Մայիս 25ին Նովոյե Վեթե-
լաքարին առած սեղեղանակեան համաձայնութեան
շունչն փոխուած է ի նպաստ Թեհերանի:


Աստուծոյ եղբայրները՝ Իգմիտ-Անկիւրիայի
երկաթուղւոյն շինութիւնն Otto Kappի առա-
ջնորդութեամբ շուտով կը յառաջանայ: Անա-
տոլեան երկաթուղւոյ գիծն 460 քիլոմէթր եր-
կայն պիտի ըլլայ եւ շինութիւնը չորս տարւոյ
մէջ պիտի վերջանայ: Շինութիւնը կը հոգա-
մանաւորապէս այս նպատակաւ կազմուած ըն-
կերութիւն մը, որոյ գլուխն են Vicome Viali
եւ Finé. Վիգալի իրբեւ ընդհանուր հիմնարկու
երկաթուղեաց շինութեան՝ սերպիական երկա-
թուղիքը շինած է: Ծանօթ է որ գերմանական
երկաթուղեաց ընկերութիւնը գնած է նաեւ
Հայտար փաշա-Իգմիտի 91 քիլոմէթր երկա-

թուղին, զոր անգլիական ձեռնարկուք 15 տարիէ վեր կը գործածէին: Որովհետեւ Հայտարարաւոր զոչայ շրջանակին մէջ է եւ այս աշխարհաբարդարին հետ անընդհատ յարաբերութիւն ունի, երկաթուղւոյ շինութեան ապահով խաւրիսի մըն է այս, եւ շինութեան պէտք եղած նիւթերն, զոր իզմիտ գտնել կարելի չէ, Կ. Պոլսոյ վրայէն կարելի է հասցընել:

Ռուսաստանի հոռնայր: Ռուսաստանի 1889 տարւոյ հունիքը Ռուսոյ երեւմտից պաշտօնարանին առած տեղեկութեան համեմատ հետեւեալն է.

	1000 հեռ. մէր (2.09 Կերպրիդր)	1887	1888	1889
Հաճար	125.000	118.500	102.500	
Չմբուան ցորեն	16.600	18.700	7.000	
Սմբուան ցորեն	30.100	31.000	26.800	
Սարսափ	103.500	91.500	90.000	
Գարի	28.200	26.500	20.200	
Կորեակ	8.750	9.150	6.650	
Չեւորեակ	10.400	10.800	10.100	

Սմբուան ցորենն ու վարսափը միջին հունիքէ միայն աւելի է: Հաճարի պահանջ 9 1/2 միլիոն Գարի կամ 8 2/3 առ. հարիւր է, իսկ ձմբուանը 4 1/3 միլիոն կամ 39 առ. հարիւր: Գետնախնձորը միջին հունիքէ աւելի էր, գոհացուցիչ էր միայն Պետարպիւի, Գերսոն, Ցաւրիս, Վորոնէշ եւ Եկապերիմովայ: Կոյնպէս եգիպտացորենը միջին հունիքէ առաւ:



ՅՈՒՆԱՆՈՒՅՈՒՆ

ՆՈՐԱՆՈՒՅՈՒՆ

Նոր ներկանիւծ մի Գարսիստան:

Ինչպէս Chemiker Zeitung կը ծանուցանէ, Նիւնի-Նոլփորտի այս տարւոյ ամառաձառնի մէջ կը վաճառուի Գարսիստանին բերուած Ugom առաւախ ներկանիւծ մը, որ խորաստի մէջ կը գործածուի: Գոյնը գրեթէ այնպէս զօրաւոր, ազնիւ եւ աւեական է, ինչպէս տարին ներկինք (alizarine): Այս ներկանիւծով ներկուող բամբակի եւ մետաղ-սեպոյ նիւթերու օրհնակներ Նոյնպէս ի տես գրուած են Նոյն տեղը:

ՏՆՏԵՍՈՒԿԱՆ

Չիթոյ լոնդրն մարտիոն ընկն:

Կարաճիթոյ եւ ձիթոյ լոնդրն մարտի վրայէն հանելու համար պէտք է գառնիճ հողը (magnésie) եւ բնակնգորսկը (benzine) խառնել եւ գանգուած

մը կողմէ. Նոյնը բծի վրայ տարածելու է եւ սոյն վիճակի մէջ 24 ժամ թող տալու է: Եթէ բիծն առաջին անգաման բոլորովին չլինէ, պէտք է գործողութիւնը կրկնել:

Կրտսեմ ռախալիսի գամագանձիռայարդ նշանակն:

Եթէ կտուր կամ բամբակի դերման մասնաւոր, զգուշութեամբ որոնելու է յետոյ քիչ մը ձգալով փրցնենք, եւ բոլոր ծայրերը դիտենք, հետեւեալ երեսնութները կը տեսնուին: Բամբակէ գերմանը շատ գիւրաւ կը բրդի, եւ բոլոր ծայրն զանգրանման եւ ստապէն ոլորուած փրցուց. իսկ կտուր գերմանը ձեռքին մօտ կը բրդի եւ ծայրի մազակուներն ուղիղ եւ անոլոր կը մնան: Փորձառու մը շատ գիւրաւ կը ծաննայ այս եղանակու տարբերութիւնը, եւ որեւէ իրիթոյ խառնուրդը կրնայ որոշել:

ՍՈՆԵՐԱՆՈՒՅՈՒՆ

Հոռնակարը ռոռնարմիկ ընկն:

Ի տեսնակարիւրեւորարի մէջ լուսարմիկ ընկնու համար հետեւեալ պարզ եղանակը կրնայ ի գործ գործել: Ըստ կարի հաստարաշափ բարակ խաւարաւ մը պէտք է օսլայ (սիւն-սիւն) սննդ օծել, եւ քանի որ չէ շորքած վրան փոշիացել ծծմբաթթիւ ուային ծանրահող (barium sulfate) կամ ծծմբաթթիւ ուային կիր ցանելու է, եւ որպէս զի փոշին առնէ կողմ կողմ վրձինով շատ անգամ տարածելու է: Հիմայ ինգիլը լուսակարը, որ խաւարաւ վրայ վրայ պիտի չըլլայ, թափանցիկ ընելու վրայ է. զոր կրնանք այս կերպով ընել: Պատկերին ետեւի կողմը աղնուց (ricin) իւրով օծելու եւ աւելորդ իւր մարտը լաթով մը արբելու է: Այս թափանցիկ պատկեր վերոյիշեալ կերպով պատրաստուած խաւարաւին վրայ կայրելու եւ վառարանի մէջ քով շորքնելու է. յետոյ այս պատկեր լուսայաւել զնելու է: Արեւու ճառագայթներն այս թափանցիկ թղթին անցնելով կը հասնին եւ կը թափանցեն փոշոյն մէջ. փոշին լոյս կը կլնէ եւ վերէն կը սփռի ճառագայթի արձակել, վրան զի այս գործողութիւններով փոշին լուսածին մարմին մը կը լլայ, միջոյ մէջ կը փայլի եւ յեականու ընէ պատկերին չի տարբերի. որովհետեւ փոշոյն տարածեալ լոյս կ'արձակեն: Այս երեսնութն ստուգելու շատ չքեղ է:

